## 154. ԱՆԳՐԱԳԵՏ ՏԵՐՏԵՐԸ

*Մի կնիկ մարթին ասըմ ա. «Այ՛ մարթ, տո̈ւ էլ քյնա̈ մի տըեղ տերտերութին արա»։*

*Մարթը ասըմ ա. «Ա՛ կնիկ, ես կյրի սեվն ու սիպտակը գյիդըմ չեմ, վըենց տերտերութին անեմ»։*

*Կնիկը ասըմ ա. «Գյիդըմ չեմ, ինչ ուզըմ ես արա, պըետկ ա տերտերութին անես»։*

*Սրա̈ ճարը կտրվըմ ա, ծըեռի կա̈պեկնին իրար ա քցըմ, փլի-լոն-միլոն ա առնըմ ու քյնըմ ա, մի հեռու եռ ընգյա̈ծ կյեղըմ տերտերութին ա անըմ։ Հմի էս խեղճը կյիր-պա̈ն չի գյիդըմ։ Ի՞նչ անի։ Կյիրը պա̈ց ա անըմ, ծըեռին փըռնըմ, բուրվառն էլ էն մի ծըեռմը թափ տալով, ժամի միջին քյնըմ ա, կյա̈լի ու ասըմ ա. «Քյնա̈մ Բաքու, կյա̈մ Թիփլիզ, ալելո՜ւա, ալելո՜ւա...»։*

*Օրերի մի օր կաթողիկոսը մա̈նըմ ա, վըեր էփինչ կյեղըմն էլ տերտեր կա։ Վարթապըետին ղրգյըմ ա, ասըմ ա. «Մի քյնա̈, տըես էտ ո՞վ ա, ի՞նչ տերտեր ա»։*

*Վըրթապետը կյա̈լիս ա ըտի, վըեր տրա̈ պատարագը ստուգի։ Սա̈ վըեր տըենըմ ա, լուզուն կպչըմ ա։ Ասըմ ա. «Տըեր աստոծ, ես ըսօր ի՞նչ դեմ ասիլ»։ Դե՛, տա̈ էլ ուրուշ զատ չի գյիդըմ, ըլեա իրան հին խոսկերն ա ասըմ ու էվլնցնըմ ա, ասըմ ա. «Ընդիան Բաթում»։*

*Վա̈րթապետը էլ հա̈մփերըմ չի, ջղայնութենիցը վըեր ա թռչըմ, տրա̈ մուրքիցը մի մազ քաշըմ, պուկըմ։*

*Ժողովուրթը ասըմ ա. «Էտ խի քաշեցիր»։*

Ասըմ ա. «Սա̈ սուրփ մարթ ա, ով սրա̈ մօւրքիցը մի մազ պահի իրան ծոցըմը, հարիր տարի ա̈վել կապրի»։

Ժողովուրթը վրա̈ ա տա̈ռնըմ, սրա̈ մօւրու̈քը սաղ քաշըմ, էլ մի մազ էլ ա հիլ չի անըմ։ Սա̈ մի հանգով, անջախ-անջախ տու̄ս ա պրծնըմ, կյա̈լի տուռն։

Կնիկը, վըեր տենըմ ա տրա̈ դուգեն-մուդեն, իրես-միրեսը ակլորած ու ըրնըթաթախ ըլա̈ծ, ասըմ ա «Ա՛ տղա, էտ ի՞նչ ա ըլել»։

Ասըմ ա. «Ա՛ կնիկ, էլ հրցնիլ մի, սհե՛, սհե՛ վարթապըետ էր ևկել, վըեր պաղարաքը ստուգի, ես էլ նրա̈ աչկին լա̈վ ըևվալու մհար Թաթումն էլ էվլնցրի, ու կլխիս էս օյինը պիրին»։

Ասըմ ա. «Ա՛ տղա, ա՛ շա̈շ, կլխիտ քար ընգյնի, բա էն ա Բաքվովն ա Թիփլիզովը յոլա քյնինք, էլ խի քյնփր Թաթում, վըեր մու̄րու̈քտ պլոկիլ տվըիր»։

